**Արձանագրություն N 3**
ՀՀ ՈԿ ԳՀԱՊՁԲ-19/24 ծածկագրով գնանշման հարցման
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 28 նոյեմբերի 2019թ
ժամը 14:30

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Մ.Մուրադյանը
անդամներ՝ Հ.Մարգարյանը, Ե.Վարդանյանը
քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան
Մասնակցում էր՝ «Սվետան» ՍՊԸ -ի լիազոր ներկայացուցիչ՝ Ա. Հովհաննիսյանը:

**I. Մասնակցի հետ գների նվազեցման բանակցություններ վարելու մասին**

---

(Մ. Մուրադյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

Սահմանված ժամկետում և հրավերի պահանջների համաձայն առաջարկված գների նվազեցման վերաբերյալ բանակցությունների համար հրավիրված հանձնաժողովի նիստին ներկայացել էր «Սվետան» ՍՊԸ -ի լիազոր ներկայացուցիչ՝ Ա. Հովհաննիսյանը:

2. Հանձնաժողովը քննարկեց և որոշեց գների նվազեցման բանակցությունների համար սահմանել 15 րոպե ժամանակահատված:

2.1 Բանակցությունների համար սահմանված ժամկետի ավարտին «Սվետան» ՍՊԸ -ի լիազոր ներկայացուցիչ՝ Ա. Հովհաննիսյանի կողմից կատարվեց նոր հետևյալ գնային առաջարկներ.

| Ապրանքի | | | | *Մասնակցի անվանումը և նոր գնային ընդհանուր առաջարկը՝ ՀՀ դրամ)* | Նախահաշվային գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|---|---|
| Չափաբ. համարը | Անվանումը | *Չափի միավորը* | *Քանակը* | «Սվետան» ՍՊԸ* | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 3 | Վրձին ներկարարական տարբեր չափսերի | հատ | 30 | -- | 15000 |
| 6 | Աղբարկղ թիթեղյա | հատ | 10 | -- | 45000 |
| 9 | Դույլ մետաղական 10-12լ, | հատ | 6 | -- | 6000 |
| 10 | Թեյի կամ սուրճի բաժակներ | հատ | 12 | 17880 | 18000 |
| 11 | Թեյի կամ սուրճի բաժակներ | հատ | 12 | 14880 | 15000 |
| 24 | Քանոն մետաղական | հատ | 30 | -- | 3900 |
| 25 | Սեղմակ փոքր | հատ | 500 | -- | 4500 |
| 26 | Սեղմակ միջին | հատ | 200 | -- | 4000 |
| 27 | Սեղմակ մեծ | հատ | 100 | -- | 3000 |

***մասնակիցը ԱԱՀ վճարող չէ**

2.2 Ընդունել ի գիտություն, որ

ա/ 3-րդ, 6-րդ, 9-րդ, 24-27-րդ չափաբաժինների համար նոր գնային առաջարկներ չեն ներկայացվել,

բ/ 3-րդ, 6-րդ, 9-րդ, 24-27-րդ չափաբաժինների համար առաջարկված գինը գերազանցում է այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

## II. Ընթացակարգի հայտի գնահատման արդյունքների ամփոփման մասին

---

(Մ. Մուրադյան)

3. Գնահատող հանձնաժողովը ընդունելով ի գիտություն, որ 3-րդ, 6-րդ, 9-րդ, 24-27-րդ չափաբաժինների համար նոր գնային առաջարկներ չեն ներկայացվել և առաջարկված գները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները, որոշեց. 3-րդ, 6-րդ, 9-րդ, 24-27-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն հետևյալ հիմնավորմամբ՝ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

4. Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով հայտերի գնահատման արդյունքները և ներկայացված գնային առաջարկները, որոշեց.

ա/ «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ին 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել՝ 1-ին չափաբաժնի համար:

բ/ «Սվետան» ՍՊԸ-ին 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել՝ 10-18-րդ, 20-22-րդ չափաբաժինների համար:

գ/ «Մեծ ծիածան» ՍՊԸ-ին 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել՝ 2-րդ, 5-րդ, 7-8-րդ, 19-րդ, 23-րդ, 28-30-րդ չափաբաժինների համար:

դ/ առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկել երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հրավերի 2-րդ բաժնի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

ե/ հարցում ներկայացնել ՀՀ պետական եկամուտների կոմիտե հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

զ/ փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստ հրավիրել ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելու օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը ժամը 14.45-ին ք. Երևան, Ծովակալ Իսակովի 29, «գնումների խումբ» աշխատասենյակ հասցեով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Հանձնաժողովի

նախագահ _____ Մ.Մուրադյան

անդամներ՝ _____ Հ.Մարգարյան

_____ Ե. Վարդանյան

քարտուղար՝ _____ Գ. Ջանջուղազյան